

պատահիր . — Ազգին ծառայել . Ազգին
յառաջադիմութեան նպաստել , հա-
ւառք չեմք ընծայեր դոցա պատրուա-
կեալ նպատակին և չըպիտի ընծային
ամեն անոնք , որք փոքր 'ի շատէ կը
զգան եւ կը հասկանան Երուսաղէմի
բարոյտեան նշանակութիւնը : Ամեն
լուսաւորեալ ազգեր կը խոստովանին ,
որ յառաջադիմութեան էական տարր-
ներ են դպրոցն ու տպարան : Եթէ
դպրոցասէր էին , ահա՛ դպրոց , ուր
ամեն գաւառներէ մանուկներ կ'ու-
սանին , կարող էին այս տեղ իրենց ազ-
գասիրական իղձերն ու նպատակներն
'ի գլուխ տանիլ . եթէ տպարանասէր
էին , ահաւասիկ տպարան , կարող է-
ին իրենց գործունէութեամբ Ազգին
եւ Եկեղեցւոյ օգտակար լինիլ . եթէ
ժողովրդասէր էին , դարձեալ Երու-
սաղէմի մէջ կարող էին իրենց ժողո-
վրդասիրութիւնը արդիւնաւորել ,
ուր քանի որ տարուէ տարի ամեն կող-
մերէն , Տաճկաստանի գաւառներէն ,
Ռուսաստանէն , Պարսկաստանէն եւ
այլուստ Հայ — ուխտաւորաց մեծ բազ-
մութիւն կը ժողովի :

Չէր և չէ ասոնց մին , այլ միմիայն
Ս . Աթուոյս խստամբեր կեանքը . ո-
րովհետեւ ծանր պարտուց տակ կը հե-
ծէ և հազիւ ուրեմն իւր Միաբանու-
թեան օրապահիկն կը հայթայթէ դա-
ռին եւ գժուարատար եղանակաւ .
Ազգ . Լրագրերէն տմանք առանց իմա-
նալու բանին էութիւնը , առանց հե-
տախուզելու , միայն հրատարակեցին
թէ « Երուսաղէմոյ Միաբանութեան
բանիբուն և գործունէայ մասը մեզ
անծանօթ պատճառներով կը հեռա-
նայ յիշեալ վանքէն » : Չեմք գիտեր
թէ այդ Մեծ . Պարոններուն համար
բանիբուն և գործունէայ բառերը ինչ
նշանակութիւն ունին . արդեօք ան-
ծուկ կացութեան մէջ Ազգին ծառա-
յելը գործունէութիւն է , թէ Պօլսոյ
հանգիստ և հաճոյարար ափանց վերայ
կեանք անցնելը :

Ահաւասիկ այս է աղգային հոգե-
ւոր Իշխանութեան 'աղաւաղ դրու-
թեան հետեւութիւնը , որ թերեւս
աւելի ծանրանայ , եթէ բարեկարգե-
լու հոգ չը տարուի :

ԱՄՐԻՆԵՆԷ

ԳԻՆՅԱՋՆՈՒՂԻ

Ա.

ՈՐՈՏԸՆԴՈՍ ամպրոպաց ճայթռնն չըռնդք շանթարձակ .
Բարդ 'ի բարդին դիզացեալ՝ պատի ամպոց թուխ կուտակ
ցեթերին ծով կապուտակ :

Մասիս հըսկայն հինաւուրց , յը յԱկոււոյն ջինջ ալիս
Բստուերաշուբն հովանիք վէտ վէտ կային 'ի ծըրխնս ,
Յարեանց լուղի ճապաղիս :

Ո՛չ եւս հարսունք նաղելիք ճեմ՝ ըզճեմի դարձադարձ ,
Զաստուածանուէր առնուն պար յորոս վարդից պոսակազգեաց
Առ խաղս վըճիտ աղբերաց :

Ոչ եւ. ո 'ի ձի ճոխրաւորաց վարդեալ մանկտի զինակիր ,
Ընդ բլուր ընդ մարդ եւ հովիտ 'ի գոհնչ փողոց գայ 'ի հիւ
Յորոց ելեալ 'ի խնգիր :

Չայր լաւնից ձայնք ողբոց փոխան երգոց քաղցրաձայն
Ելեալ բաղեկն անդադար՝ 'ի բիւր շրթանց 'ի կական
Ձերկնից կամար սրըլնձեայն . . . :
Քշուան գառնիք անտերունչ վագերց անկեալք 'ի յերախ ,
Չոց ասպատակ հիւսիսին հրոսեալ իբրեւ ըզմարախ
Քակեաց զամուրն ըզփարախ :

Սուր թաթարին անողորմ աւանդ հընձէ անխընաց
Ձառոյգ մանկտին եւ կուսան , զվարդ եւ շուշան Ագինայ .
Յուսով կենացն յադակաց
Բիւրք 'ի բիւրուց վրկայից ննջեն 'ի քուն հոգեզմայլ .
Ձերգ ըզնրան կարմրակոյտ կառկառս ծաղկեաց բոցափայլ
Անժամ յերկիր թօթափեալ :

Ծերք տըւորք յեց 'ի ցուպ , մատաղամարք սրտաթունդ
Ըզձեռանէն ունելով զորդւոց թոռանց փափկանունդ ,
Հատուած գընան քունդ 'ի գունդ ,
Ձողջոյն տըւեալ քաժանման յաչս արտասուք յորդառատ ,
Եինից մատրանց տաճարաց 'ի հուր 'ի բոց չըջապատ ,
Եւ գամբանաց մամբարմատ . . . :



Այլ այս ուսով յանկարծ չող ծագեալ յաւերս 'ի մրնաջ :
Միթէ յերկնից վայրիլեալ զուարթուն աջք լուսափայլ
Գայ շիթս հեղուլ կարմրակայլ .
Կամ թէ փայլա՛լ երկնապայ՝ հերձեալ ըզկողըս ամպոց ,
Ընդ սեաւ ալիս եթերին զերդ ոգի մի անդընդոց
Յուրայ ցայտէ հրատաբոց . . . :

Ո՛հ 'ի սրբոյն մաղապուր՝ յեցեալ 'ի կող մի ժայռի ,
Յաջմէ սուսեր ծըխաշունչ , ձախմէ մանկիկն աղածրի ,
Ու առ ոտս անդունդ յերերի ,
Դիւցաղնուհին Կարինէ նոր Ամաղճնն Հայ — զարմին ,
Թըւի կոկոն դեռաբաց երփինսգեղ մայիսին
Ձեղեալ յարտօսր գիշերին :

Հերք խառնիխուռն ըզթիկամբք ծալ ծալ ծըրին ալեգէս :
Աշկունք յասպիս որք երբեմն վըճիւորք երկնի ու ալեաց պէս
Կաթոգնէին սիրակէլ :

Աւանդ պղտորք յարտասուաց՝ հազիւ փողին նըւաղկոտ ,
Իբր ըղծովակն Բզնունեաց յալեաց ծրփինս 'ի դըղրդ
Կամ զերկին յամալ թքիայորդ :

Ձիք զուլամբ չիք մեհեւանդ քառամանեակ պաղպաջուն .
Թօթափեցան՝ զսրդքն համայն ըղկնի մահու սիրելւոյն ,
Ձերդ շողքն 'ի մուտս արփենւոյն ,
Այլ ոտիսին մահաբուն բոսորաբուլիս չիթք արեան
Իբր յետին զսրդք իւր մահուան անդ ըզգիմօքքն շողան
Ձուգեալ ըզլարդ ընդ շուշան :

Յեզր անգնդոյն անյատակ ընդ մէջ կենաց և մահու ,
Քան զօրահասն իսկ ինքնին ըստառնալից ու ահարկու ,
Ճօճեալ սուսեր մարտացու ,
Հանգունաափայ է զուարթնոյն որ իւր շանթիւքն հրատեղաց
Ձվերաբերեալն յանգնդաց զըսպայագունդքս դիւաց
Իսպառ առնէ արտալած :

Մերթ պիչ քնքոյշ յիւր մանկիկն , մերթ գիտկունն սառնասեր ,
Աչքն ըղխումունն հախակիր 'ի թիւս մրտացն ընդ այեր
Կարգ ըստ կարգէ նըկարէր .
Հանգունաափայ ձիւնափայլ զուգից պորից պաղպաջուն ,
Ոյց բեկբեկին կերպարանք յալիս ծովուն կապտագոյն
Մինչ ընդ երկինս ճախր առնուն ,

Այլ աւանդ քեզ Կարինէ , շուշանդ հովտին Ադինայ ,
Թէպէտ տապաստ արկանես ըլիւս 'ի խուժից անիւնայ ,
Քեզ օրահաս առ դուրս կոյ .
Ձարեւ կենացդ հատանել դեռ յարշալոյսն վարդագեղ ,
Հէնք հիւսիսի ժանտաժուտ , ամօթ յաւերժ , զինչ հեղեղ
Ի մի՛նդ հրոսակ տան ահեղ :

Շաչիւնք հրափայլ սուսերաց , ճայթմունք լարից աղեղանց ,
Օրահասին կարապետք՝ քան զորոտմունս ամպրոպաց
Հնչեն բացուստ 'ի լերանց .
Եւ աղաղակ խառնաձայն վրիժապահանջ ամբօրի ,
Ձերդ ըղմունչիւնս ալեաց մինչ ծովն 'ի խորոց ամբօրի
Գամ քան ըզգամ զայրագնի :

Աւանդ զմանուկն աղածրի , որ ճիչ բարձեալ յերերի
Սառնասառոյց յերկիւղէն փարէր զճնգովքն մայրենի ,
Հեղոր արտօսր դառնաղի .
Յուղեցան գուլթք Կսրինեայ , աչկունքն յաղբերս փոխեցան .
Կարկառ նըմին զիւր ծըղիս , և գգուեալ զգէմն վարդանման
Բարբառեցաւ անրաձայն :

“ Ընդ վայր ուրեմն ծնաք ըղբեղ ամուլքս երբեմն բարեբաստ .
 “ Եւ դմւ 'եդ հարկաւ կոյր բաղդին անցեալ անկոյիս փոյթ տապաւաստ .
 “ Զերդ վարդն 'ի շող տապաստաստ .

“ Կամ 'ի մանուկ հասակէդ 'ի տար աշխարհս արտաղած՝
 “ Փթթեալդ 'ի սէր ու 'ի գգուանո ըսպաս հարցես հողամած՝
 “ Զաղիր ոտիցն այլադգեաց :

“ Ոչ եւս քեզ մայր կաթոգին՝ որ յարտասուացդ ցողակայլ
 “ Ըզհասարակ գիշերաւն ընդոտո 'ի քնոյն զարթուցեալ՝
 “ Տայր կաթն չթանցդ կարմրափայլ .

“ Յանկեան ուրեք անծանօթ տախտապարեալ բացօթեայ ,
 “ Յողջոց 'ի մուռնչ լացուսցես՝ զերկնից կապոյտն աստեղեայ
 “ Մինչ մութն ըղբեւ թանձրանայ :

“ Ոչ յոյս ծաղիկս սիւռեսցէ յանձուկ կենաց 'ի շաւիղ .
 “ Խնդից խաղուց սրտահեշտ յաչացդ անցցէ շառաւիղ ,
 “ Ու 'ի սրտէդ սէր ոսկեծիղ .
 “ Եւ մինչ ընկճեալ ընդ վնոօք դիպել մահուն քեզ մաղթես ,
 “ Ոչ ձեռն գլթոտ մրաերմին կողկողելով սիրակէզ՝
 “ Փարատեսոցէ զամպոց դէղ . . . :

“ Աւաղ ինձ մօրս որ երբեմն օրորոյիդ առ ընթեր ,
 “ Մինչ առ 'ի կոխ ճօճէին ըղբեղ զեփուռք խնկաբեր
 “ Ու առուակն հեղիկ կարկաջեր ,
 “ Զախր 'ի բարձունս առն'ի յաշխարհ ոսկեակ անբրջոց ,
 “ Անդէտ զի հարկ էր ինձ աստ զհոգւոյս ծաղիկ կենսաբոց
 “ Եղերերգեւէ դառն 'ի կոծ . . . :

“ Թո՛ղ ասրս երգս այս լոյի օրօր քննոցդ յամբարմ . . . :
 “ Թո՛ղ ձեռքս իմ այս որ քեզ կաթնն ջամբեցին մեղրահամ՝
 “ Քաղէ՛ն զոգիդ տարածամ . . . :
 “ Ուրուք զաղիր դիականցս կայտոռէ՛ն ըզմօք թեւապար . . . :
 “ Աղէ՛ մատիր 'ի ձենձեր քան թէ ցաւօք վնասար
 “ Հալել մաշէլ անդադար . . . :

Ասաց ու 'ի նոյն ըզտուսերն ամբարձ զորդեակն հարկանել .
 Երբ գորով մայրենի ողորմ տեսցն անընդել՝
 Ըզթափ բազկին իւր արգել :
 Ի չորրորդին ցնորից հոյք զաջք նորին արկեալ քող՝
 Ըզմահաղէնն արիւնոտ նստոց մանկան իւր 'ի կող .
 Եւ չիթք բոսոր թալին զհող :

Իսկ մինչ անթիւք ընտելաւ յապուշ կրթեալք ՚ի ժանտից ,
Տնկեալք կառչին անշքունչ սիրաք ՚ի յերերս քստմնալից ,
Զինչ պակուցեալք ՚ի շանթից ,
Դիւցաղնուհին Կարինէ վերուստ ՚ի վայր դարահոս՝
Խբր ըզկարապ զոր ՚ի մահ հարու անգութըն հաւորս ,
Գընացր ՚ի մութն ՚ի քառս . . . :



Մըսէմ ոգիք լալծից , գուսանք ջայից ողբերգակ ,
Տիրաւարկաջ քընարիս սղէ՛ լերուք օժանդակ .
Ենչեցէք հողմք ասունորակ .
Մըռնչեցէք լալագին ալիք ծովուն մրկաշունչ ,
Սօսիւնք մայրեաց սաղարթուն , սնչք գիշերոյն թաթաւուչ ,
Ըզալ հարէք մեծամեունչ :

Ո՛հ մի՛ բռնցի դեղ դալար , մի՛ փթթեալին անդ ծաղիկք
Աւր ախեցան ցիր և ցան պատառք մարմնոյն իւր փափկիկ
Անդամ անդամ ընկեցիկ .
Աւր թօթալեաց ժանտ հիւսիս ըզթերթ վարդին բեհեղեայ ,
Համբոյր հարսին դարնայնոյ՝ տամուկ ՚ի շաղ մարգարտեայ ,
Բնութեան տարփմն յարակայ :

Եղունք քեզ ս՛հ Կարինէ , զուարճ կայթիցդ ՚ի դոխիւն
Յակումք պարուց գեղափայլ՝ կաքան ըգքեղ յանկարծոյն
Մըռայլ օգիք գիշերոյն .
Զերդ Պերսեփան ծաղկաքաղ Եննայ ՚ի մարգըս դալար
Խլեալ ՚ի թուխ Սանդարաց , զոր Դեմետրէ վշտահար
Խնդրեաց զնա ՚նդ համաշխարհ :

Փակեանց քեզ հող ռիսերիմ ըզգութ գորով իւր քնքուշ .
Ո՛չ կանգնեցան քեզ կօթողք , ոչ մահարձանք առ ՚ի յուշ
Զոր ամք եղծեն վաղ կամ յուշ .
Երկիրս Հայոց բովանդակ վայր է սրբոց ակըմբին .
Նոյն Մասիսն է արձան , մահիկ՝ լապտեր գիշերին ,
Դարք ըզնոքօք բոլորին :

Դուք՝ զոր ըկեն անդադար բըռունք խուժից անօրէն ,
Հարսնչք և մարք , քորք սիրուն , յուշ լիցի ձեզ Կարինէն
Վառեալն ՚ի զէն յառնաղէն .

Եւ թէ իցէ յերակա ձեր չիթ մի արեան կենսապահ
Օ՛հ տուք պատուոյն պարծանաց զսթոռ փառաց գերագահ
Ամբարձաձիգ քան ըզմահ :

Ա. Ե. Կարապետեան Կ. Պոլսէն
Ս. Շ. Ժ. Կարապետեան :

ԱՍՏՂԱԳԻՏԱԿԱՆ

ՀՈԼՈՎՈՒՄՆ ԱՐԵՊԱԿԱՆ ԵՒ ԲԻԾՔ

Ա.

Արեգակը , ինչպէս ըսինք նախըն
թաց թուով , կը գառնայ իւր տրա-
մագծից միայն վերայ . այս շարժումը
կ'ըսուի հոլովում , որ կը տեւէ գրեթէ
25,5 օր .

Արեգակն հոլովման գիւտը , որ
աստղագիտութեան համար յոյժ կա-
րեւոր է , եղաւ տասնեւեօթներորդ
դարու սկիզբները , գրեթէ այն միջո-
ցին , երբ նոր գտնուած էր գիտակը
և սկսած էին արեգակնային գիտակնե-
րով նայիլ : Գիտութիւնը՝ այս մեծ
գիւտը Հոլանտացի աստղագետ Ժան
Ֆապրիսիուսի կը պարտաւորի . թէեւ
անկէ առաջ Ժիարտանու-Պրուենց , որ
ըստ Հոլմպոլտի խարոյակահանգիսին
զոհ եղաւ հեռագէտի գիւտէն ութն
տարի , և արեգակնային բծերու յայտ-
նութենէն տասն և մէկ տարի առաջ ,
ըսաւ թէ արեգակը կը շարժի իւր ա-
ռանցքին վերայ . Գէրլէր ևս ենթադր-
րած էր այս շարժումը . իսկ Գալիլէ , որ
Ֆապրիսիուսի ըրած մեծ գիւտի տա-
րին առանձինն գտաւ արեգակնային բը-
ծերը , չը յայտնէր Հոլանտացի աստ-
ղագիտին եղբայրացութեան հասնե-

լու : Ահաւասիկ թէ՛ ինչպէս կատա-
րուած է աստղագիտական այս մեծ և
կարեւոր գիւտը :

Ֆապրիսիուս մի օր դիտարկելով արե-
գակն սկաւառակը քննելու ատեն
յանկարծ մակերեւութին վերայ մթա-
գոյն բիծ մը կը տեսնէ բաւական մեծ
տարածութեամբ : Ի սկզբն ամօք կը
կարծէ , բայց յետոյ աւելի մանրազն-
նին քննութեամբ կը հասկանայ , որ
խաբուած է : Արեգակը հետզհետէ
հորիզոնէն բարձրանալով , եւ լուսոյ
չլսցուցիչ զօրութիւնը սաստկանալով
կըստիպուի երկրորդ տեսութեան ըս-
տիսեւ այս եղանակի երեւութի ուսու-
մը շարունակելու համար : Յիշեալ
գիտունը կ'ըսէ , «Ես և հայրս անցու-
ցինք օրուան մնացորդ մասը և գիշե-
րը մեծ անհամբերութեամբ և շարու-
նակ մտածելով , թէ ի՞նչ կրնայ լինիլ
այդ բիծը , եթէ արեգակնային մէջ է ,
կ'ըսէի , անտարակոյս վերստին պիտի
տեսնեմ , եթէ արեգակնային մէջ չէ , իւր
շարժմամբ անտեսանելի պիտի ըլլայ :
Վերջապէս առաւօտուն անպատմելի
ուրախութեամբ կրկին տեսայ , բայց